

թեւերը, որքան էլ հեռու գնան դէպի ցնորահան հորիզոնները, կերտուած են աշխարհային նիւթերից: Իսկ սրանք յաճախ ոչ այլ ինչ են, եթէ ոչ հին հոգեւոր կեանքի վերապրումները:

Թուում է, թէ հին հաւատի մարած արեւի շառագունած երկինքը թողել է մի քանի շողեր նոր աւետարներին, Լուսաւորչի եւ Տըրդատի կեանքի վրայ:

Արդարեւ ի՞նչպէս պիտի հասկանանք Լուսաւորչի մուտն ի վերապն եւ ելն ի վերապէն: Բարձրազան չարչարանքների վերջարանութիւն է՝ մեծ նահատակին ընկերացնել օձերի հետ խոր վերապի մէջ: Ի՞նչ է նշանակում այս արտասովոր պատիժը:

Կարծե՞լ, որ զրական հետեւութիւն է Դանիէլ մարդարէի արկածին, որին նոյնպէս Նարեզողոնոսորը ձգեց մի խոր փոս, ուր պահուում էին առիւծներ: Շատ կարելի է որ նմանութիւն կայ, բայց ոչ այն մտքով, որ հայ գրէչը փոխ է առնում Աստուածաշնչից, այլ որ երկուսն էլ անջատ վերապահումներ են հին անցելի նման հաւատալիքների:

Հանգուցեալ Գալուստ Տէր Մկրտչեանը հրատարակելով մի հին եւ ընտիր թարգմանութեամբ վկայարանութիւն, որ է Յիշատակ դատակնքաց Գորիա եւ Շմոնի վկայից, (Արարատ, 1896, օգոստ., սեպտ.) այն միտքն յայտնեց, որ Ազաթանգեղոսը օգտուած է այս յիշատակարանից:

Գորիա եւ Շմոնա Եդեսիացի էին եւ այնտեղ մարտիրոսացել են Դիոկլիտիանի օրով, ժամանակակից էին, ուրեմն եւ մեր Լուսաւորչին: Սրանց եւ Լուսաւորչի չարչարանքների մէջ որոշ նմանութիւն կայ: Նախ երկուսին էլ կախում են մի մի ձեռքից, յետոյ մի մի ոտքից, այնուհետեւ նետում են մի փոս եւ հանում գլխատում սրով:

Հետաքրքրական է մանաւանդ փոս ձգելու դէպքը:

«Հրամայեաց դատաւորն իջուցանել զնոսա ի կախաղանէն եւ տանել արկանել ի դուր մի խաւարային, որ կոչի վիրապ, եւ հարկանել զերկուսին ոտս նոցա ի կոճեղս մինչեւ ցառաւօտ: Եւ տարաւ արգել զնոսա ի դուրն խաւարային եւ ծեփեցին գերդ եւ գղաւոն գրին... եւ զկնի երից տուրնցեան եւ երից գիշերայ զի

ոչ տեսին նոքա լոյս, բացին զդուրս դրին յերեսաց նոցա եւ պահեցին անդէն ի նոյն դրի, ուր արգելեալ էին զնոսա զհրոտից ամիս ի զլուս եւ զնաւասարդի եւ զհոռի մինչեւ ի շորեքաւասներորդն քաղոց»:

Այնուհետեւ հանում են դրից եւ կախում ոտից միմիայն Շմոնին, եւ որովհետեւ դարձեալ յամառում էին, «հրամայեաց իջուցանել եւ տանել արգիլուլ զերկոսեան ի դուրն յորմէ ելին»: «Եւ յաւուրն հինգետասներորդ քաղոց ամսոյ, յորում լուսանայր երեքչարաթին, ի ժամու զի խաւսեալ էր հաւու երիցս անգամ», սրով գլխատում են:

Նոյն Յայմաւուրքի Փարիզի դրչազիր օրինակում ասուած է. «Ի խաւար տեղի բսնտին»:

Հետաքրքրական է, որ յոյն Լակկոս բառը Ս. Գրքում թարգմանուած է սովորաբար «գուր», օրինակ Մննդ. ԼԳ. 20 ալլ եւ 22, եւ 24, Բ. Թագ. ԺԷ. 18, Դանիէլ 2. 8, Բ. Մակար. Ժ. 37. ալլ եւ նայած մտքին երբեմն «հոր» (Ելից ԻԱ. 35), կամ «ըրհոր» (Ելից ԻԱ. 33), ալլ եւ «խորխորատ» (Ելից ԼԲ. 23) եւ «լիմ» (Ա. Մակար. Ժ. 33): Միայն մի անգամ թարգմանուած է «վիրապ» (Ելից ԺԲ. 29), ինչպէս երեւում է, բանտի իմաստով որովհետեւ խօսքը զերինների մասին է:

Ճիշդ այս մտքով է դործ ածում եւ Եղիշէն, երբոր հաւատափոխ մոզպետի հասցէին Դենչապուհն սպառնում է աքսորել մինչեւ Մակուրան եւ «անդ ընկեցեալ զնա ի վիրապ մի եւ ընկալցի զմահ թշուառութեան»: (Եղիշէ, էջ 281, Վենետ. 1864 թ.):

Գորիա եւ Շմոնի դուրը նմանապէս աւելի բանտ էր քան վիրապ այն մտքով, ինչ որ նա ունի Լուսաւորչի պատմութեան մէջ: Վկաների դուրը երդ եւ դուռն ունի, «ծեփեցին զերդ եւ զդուռն», — մի հանդամանք, որ զանազանում է այս դուրը իրբեւ մի սովորական արգելարան Լուսաւորչի վիրապից:

Յոյն ընդարձակ վկայարանութեան մէջ, որ հայերէնի նման թարգմանութիւն է ասորի բնագրից, եւ պահուած է Միտափրաստի մօտ գրի համար ասուած է. «Ուաւար դուրը, որ էր այդպէս ըստ անուան եւ ըստ էութեան» (Migne. P. G. 116. Col. 136): Սրա փոխա-